## ЕСР (Единая Система Регистрации)-ում մասնակիցների գրանցման ՈՒՂԵՑՈՒՅՑ

Մ.Վ.Լոմոնոսովի անվան 44-րդ Մրցույթի հայտերն ընդունվում են Գրանցման Միասնական Համակարգի (ЕСР) միջոցով, որի համար անհրաժեշտ է անձնական մուտքանուն ЕСР-ում: Այն պետք է ստեղծել նախապես, եթե մասնակիցը այն չունի: Դրա համար պետք է կատարել հետևյալ 3 գործողությունները՝

- Գրանցում ЕСР կայքում
- Լրացնել հարցաթերթիկը
- Մրցույթին մասնակցության հայտի լրացում:

Այս 3 գործողությունները ցուցադրենք օրինակի տեսքով ***Երևանի Ա.Շահինյանի անվան ֆիզմաթ հատուկ դպրոցի 10-րդ դասարանի աշակերտուհի Ազատյան Նարինեի*** համար, ով ցանկություն է հայտնել մասնակցելու Մ.Վ.Լոմոնոսովի անվան 44-րդ մրցույթին (կայք՝ **Турнир имени М.В.Ломоносова** (turlom.olimpiada.ru)):

### Գրանցում ЕСР կայքում /գրանցվել մինչև հոկտեմբերի 1-ը ներառյալ/

Մուտք գործել reg.olimpiada.ru կայք և բացված պատուհանում կատարել РЕГИСТРАЦИЯ (ԳՐԱՆՑՈՒՄ) հրամանը:




Մուտքագրել գրանցման համար անհրաժեշտ տվյալները և կատարել ОТПРАВИТЬ (ՈՒՂԱՐԿԵԼ) հրամանը:



Ուշադրություն: Логин (Մուտքանուն) դաշտում թույլատրվում է մուտքագրել լատինական տառեր, թվեր, տողատակի գծիկ: Логин (Մուտքանուն) ու Email (էլեկտրոնային փոստի հասցե) դաշտերի պարունակությունները կարող են համընկնել, ինչպես նշված է մեր օրինակում: Մենք խորհուրդ ենք տալիս վարվել նմանապես և Логин ու Email դաշտերում գրել ձեր էլեկտրոնային փոստի հասցեն:

## Լրացնել հարցաթերթիկը

Եթե դեռ չեք լրացրել անձնական տվյալները, ապա գրանցվելուց առաջ կայքը կպահանջի դրանք լրացնել: Կարող եք նաև գնալ անձնական տվյալներով էջ և կատարել АНКЕТА (ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿ) հրամանը: Լրացրեք հարցաթերթիկը, որը բաղկացած է երկու մասից՝

1. Տեղեկություն մասնակցի մասին




2. Տեղեկություն դպրոցի մասին




Հարցաթերթիկը լրացնելուց հետո կատարել ОТПРАВИТЬ (ՈՒՂԱՐԿԵԼ) հրամանը:

**<u>Ուշադրություն:</u>** Հարցաթերթիկը լրացվում է ***ռուսերեն*** լեզվով: Լրացնել միայն այն դաշտերը, որոնք նշված են կարմիր սլաքների օգնությամբ:
Որպես օրինակ կարող եք տեսնել նաև Կոտայքի մարզի ք.Հրազդանի Հովսեփ Օրբելու անվան թիվ 13 ավագ դպրոցի մասին լրացված տեղեկությունը:




## Մրցույթին մասնակցության հայտի լրացում

Ձեր անձնական հաշիվը մուտք գործելուց հետո կարող եք գրանցվել Մ.Վ. Լոմոնոսովի անվան Մրցույթին, որի համար պետք է ընտրել այն (44-й Турнир имени М.В. Ломоносова, 2021 год) բաց գրանցումների ցանկից կամ անցնել գրանցումների էջում նշված հղմամբ:




Ստուգեք ձեր անձնական տվյալները, անհրաժեշտության դեպքում կատարեք համապատասխան լրացումներ և ուղղումներ (նշված են կարմիր սլաքներով):



Դպրոցի մասին տեղեկատվության մեջ լրացրեք ձեր դասարանը (նշված են կարմիր սլաքներով և օղակով):




Ուշադրություն: Դասարանը լրացնելիս պետք է ընտրել 1-ով փոքր դասարան, քանի որ *ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ* կրթական համակարգը *12*-ամյա է, իսկ *ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ*՝ *11*-ամյա: Մեր օրինակում **Ազատյան Նարինեն** սովորում է ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ, ք.Երևանի Ա.Շահինյանի անվան ֆիզմաթ դպրոցի **10**-րդ դասարանում, այդ իսկ պատճառով Класс դաշտում պետք է ընտրել **9**-րդ դասարան, որը համընկնում է ՌՈՒՍԱՍՏԱՆԻ համակարգին:
Անհրաժեշտ տեղեկատվությունը լրացնելուց հետո կատարեք ОТПРАВИТЬ (ՈՒՂԱՐԿԵԼ) հրամանը:

ԿԱՐԵՎՈՐԻ ՄԱՍԻՆ: Մի գրանցեք այլ մասնակիցների ձեր մուտքանունով: Դրանով հանդերձ կարող եք կորցնել ձեր արդյունքները:

Եթե դուք դրանից հետո անցել եք **УЧАСТИЕ** (ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ) էջին, ապա հաջողությամբ գրանցվել եք Մրցույթին: Այս էջի ներքևի մասում կտեսնեք մրցույթին Код участия (**Մասնակցության կոդը**), որը պետք է պատճենահանել և պահպանել օլիմպիադայում օգտագործելու համար:




Մենք խորհուրդ ենք տալիս ծանոթանալ նաև Մրցույթի կանոններին և առանձնահատկություններին հետևյալ հղումով՝ [44-й Турнир имени М.В.Ломоносова (turlom.olimpiada.ru/44turnir)](turlom.olimpiada.ru/44turnir):

**Երբ և ինչպես մասնակցել Մ.Վ.Լոմոնոսովի անվան 44-րդ Մրցույթին**

2021 թ. **հոկտեմբերի 3**-ին /կիրակի/ Երևանի ժամանակով ժամը 8:00-ից մինչև 11:00-ը սկսվում և սկսման պահից 5 ժամ (300 րոպե) տևողությամբ անցկացվելու է Մ.Վ.Լոմոնոսովի անվան հերթական 44-րդ Մրցույթը: Առաջադրանքները կատարելու համար պետք է մուտք գործել online.olimpiada.ru կայք:




Մուտքագրել **Код участника** (Մասնակցի կոդը) և կատարել **Войти** (Մուտք) հրամանը:

**Ինչպես վարվել, եթե մոռացել ենք** Մասնակցության կոդը

Մուտք գործել **ЕСР (Единую Систему Регистрации)** reg.olimpiada.ru կայքի օգնությամբ:




**ЕСР** համակարգ մուտք գործելուց հետո կատարել УЧАСТВУЮ (ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԵՄ) հրամանը և բացել 44-й Турнир имени М.В.Ломоносова հղումը:




Արդյունքում, կհայտնվեք **УЧАСТИЕ** (ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ) էջում, որի ներքևի մասում գրված է Մասնակցության կոդը /նկարը տես վերևում/:

**Ուշադրություն:** Մ.Վ.Լոմոնոսովի անվան 44-րդ Մրցույթի Մասնակցության կոդը ունի այսպիսի կառուցվածք՝ սկզբնամասում գրվում է **tl44/esr/44/**, որին հաջորդում է լատինական տառերի ու թվերի հաջորդականություն (միասին՝ 7 հատ):

**Ինչպես վարվել, եթե մոռացել ենք ЕСР համակարգի Пароль (Գաղտնաբառ)-ը**

Բացել **ЕСР (Единая Система Регистрации)** reg.olimpiada.ru կայքը, որի առաջին էջում կտտացնել Забили пароль? (Մոռացել ե՞ք Գաղտնաբառը) հղման վրա:




Կբացվի Восстановление пароля (Վերականգնել գաղտնաբառը) վահանակը, որում Логин (Մուտքանուն) դաշտում պետք է գրեք ձեր մուտքանունը (մեր դեպքում այն համընկնում է էլփոստի հասցեի հետ՝ *AzatyanNarine@fizmat.am*) և կատարել ОТПРАВИТЬ (ՈՒՂԱՐԿԵԼ) հրամանը:



ОТПРАВИТЬ (ՈՒՂԱՐԿԵԼ) հրամանը կատարելուց հետո ECP համակարգը ձեր էլփոստի հասցեին (մեր դեպքում՝ *AzatyanNarine@fizmat.am*) կուղարկի նամակ, որում պետք է կատարել **нажмите здесь** (կտտացնել այստեղ) հրամանը:




Հրամանի կատարումից հետո էկրանին կհայտնվի Восстановление пароля (Վերականգնել գաղտնաբառը) վահանակը, որում պետք է լրացնել **Новый пароль** (Նոր գաղտնաբառ) և **Повторите пароль** (Կրկնել գաղտնաբառը) դաշտերն ու կատարել ОТПРАВИТЬ (ՈՒՂԱՐԿԵԼ) հրամանը:




**Ուշադրություն:** Վերը նշված ձևով (ցանկության դեպքում), կարող եք փոխել նաև ձեր գաղտնաբառը:

**Ո՞ր դասարանների աշակերտները կարող են մասնակցել Մրցույթին**

Մրցույթին կարող են մասնակցել 7-ից 12-րդ դասարանների աշակերտները:

ՈՒՂԵՑՈՒՅՑԻՆ վերաբերվող հարցերի դեպքում կարող եք գրել *davitminasyan@fizmat.am* էլփոստի հասցեին:

Ուղեցույցը պատրաստեց ***Դավիթ Մինասյանը*** /Ա.Շահինյանի անվան ֆիզմաթ հատուկ դպրոցի SS կոորդինատոր-պատասխանատու/:

***27.09.2021 թ.***